ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/5-2

ք. Երևան 9 -ը մարտի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "ՆՈՐ ՖՈՒԴ" ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր "ԷԼԻՏ ԿԱՊԻՏԱԼ" ՍՊԸ հետ), ի դեմս ընկերության տնօրեն Մ. Սահակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

1.2 Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում Վաճառողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Վաճառողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում նշված ապրանքատեսակների մասով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը այդ մասով կլուծարվի:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավել՝ ապրանքագրով սահմանված ժամկետից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար դունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավել՝ ապրանքագրով սահմանված ժամկետից.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, պես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 391 117 401 (երեք հարյուր իննսունմեկ միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր մեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հասարակության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Քանի որ Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով <ԷԼԻՏ ԿԱՊԻՏԱԼ> ՍՊԸ հետ, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար ատասխանատու է Վաճառողը:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4,4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5	«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1
աշխատակազմի գործառնական	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
վարչություն	Սպիտակի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 220133330237000
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 03316568
ՀՀ պաշտպանության նախարարի	
տեղակալ-	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի ղեկավար	
Ա. ԳԻՐՔՈՐԲԵԿՅԱՆ	Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/5-2 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը
1.	խավիար /Խավիար/	Սմբուկի խավիար, ГОUS 2654-86: Պատրաստված տապակման կամ խորովման եղանակով: Չոր նյութերի զանգվածային մասը 24%-ից ոչ պակաս, ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 9%, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,6%, թթուների զանգվածային մասը վերահաշվարկված քացախաթթվի վրա ոչ ավել 0,4%, 520-525գր. մետաղյա տուփերով կամ ապակյա տարաներով՝ ստվարաթղթե արկղերում, մեկ փաթեթավորման մեջ 18 տուփ: Մետաղյա տուփերով մատակարարման դեպքում յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով նարնջագույն: Յուրաքանչյուր փաթեթավորման մեջ 1 բացիչ: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 50%:
2.	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	ГОUS 1633-73: Վարունգի մարինադ՝ բանջարեղենի զանգվածային մասը, ըստ զտաքաշի 55%-ից ոչ պակաս, քլորիդների զանգվածային մասը 1,5-2%, տիտրվող թթուների զանգվածային մասը վերահաշվարկված ըստ քացախաթթվի 1%-ից ոչ ավել: Վարունգի երկարությունը ոչ ավել 12 սմ: Մինչև 1լ-ոց ապակյա տարաներով, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, ստվարաթղթե տակդիրով, մինչև 12 հատ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 60%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
3.	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	ГОUS 1633-73: Վարունգի մարինադ՝ բանջարեղենի զանգվածային մասը, ըստ զտաքաշի 55%-ից ոչ պակաս, քլորիդների զանգվածային մասը 1,5-2%, տիտրվող թթուների զանգվածային մասը վերահաշվարկված ըստ քացախաթթվի 1%-ից ոչ ավել: Վարունգի երկարությունը ոչ ավել 12 սմ: Մինչև 3լ-ոց ապակյա տարաներով, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, ստվարաթղթե տակդիրով, մինչև 4 հատ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 60%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
4.	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	ГОUS 1633-73: Լոլիկի մարինադ՝ բանջարեղենի զանգվածային մասը, ըստ զտաքաշի 55%-ից ոչ պակաս, քլորիդների զանգվածային մասը 1,5-2%, տիտրվող թթուների զանգվածային մասը վերահաշվարկված ըստ քացախաթթվի 1%-ից ոչ ավել: Մինչև 3լ-ոց ապակյա տարաներով, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, ստվարաթղթե տակդիրով, մինչև 4 հատ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 60%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

* **Յուրաքանչյուր սննդամթերքի փաթեթավորման արկղերի, տուփերի պիտակների վրա դրոշմված լինեն՝**

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը
6. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
7. Ապրանքի քաշը նետտո և քանակը հատով (դրոշմվում են միայն արկղերի պիտակները),
   Ապրանքի զտաքաշը (դրոշմվում է միայն տուփերի պիտակները)
   . Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
10. Արկղերի վրայի գրառումները դրոշմված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով,
    իսկ մարինադի վրայի գրառումները դրոշմված լինեն պոլիէթիլենային թաղանթի ետնամասում
    դրոժմված 15 սմ x 20 սմ չափսի պիտակի վրա, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
11. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:
12. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
13. Արտադրող ձեռնարկության կողմից պարտադիր նշված լինի պահպանման և արտադրման ժամկետների վերաբերյալ գրառումները:
14. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակները արգելվում են:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի
Հ/Հ 900011144079	մ/6
ՀՎՀՀ 00867415	Հ/Հ 220133330237000
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	ՀՎՀՀ 03316568
ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՍԻՐՇԱԲԵԿՅԱՆ	Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-7/5-2 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկան	Չ/Մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	
1	խավիար /Խավիար/	կգ	353253	799	282249147	Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	կգ	83331	490	40832190	
3	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	կգ	107652	333	35848116	
4	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	կգ	107652	299	32187948	
Ընդամենը 391 117 401 (երեք հարյուր իննսունմեկ միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր մեկ) ՀՀ դրամ						

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական պարենային բազա:

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/5-2 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Գնման առարկան	Չ/Մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	
1	խավիար /Խավիար/	կգ	353253	799	282249147	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	կգ	83331	490	40832190	
3	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	կգ	107652	333	35848116	
4	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	կգ	107652	299	32187948	

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՔԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ
Հ/Հ 220133330237000
ՀՎՀՀ 03316568

տնօրեն

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-7/5-2 *ծածկագրով*
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-7/5-2 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 04 . 04. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "ՆՈՐ ՖՈՒԴ " ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Սահակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **130 372 467 (մեկ հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1 «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ Հ/Հ 220133330237000 ՀՎՀՀ 03316568 տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2016թ.							
						մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 20.12.2016թ
1	խավիար /Խավիար/	կգ	117751	799	94083049	26000	13000	13000	13000	13000	13000	13000	13751
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	կգ	27777	490	13610730	11000	5500	5500	5777				
3	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	կգ	35884	333	11949372						18000	17884	
4	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	կգ	35884	299	10729316						18000	17884	
Ընդամենը		130 372 467 (մեկ հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ											

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	խավիար /Խավիար/	15241210/1/4/3	20774000	31161000	41548000	51935000	62322000	72709000	83096000	94083049
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	15331490/1/4/3	5390000	8085000	10780000	13610730	13610730	13610730	13610730	13610730
3	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	15331490/2/4/3						5994000	11949372	11949372
4	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	15331173/2/4/3						5382000	10729316	10729316

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօր.

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ
Հ/Հ 220133330237000
ՀՎՀՀ 03316568

տնօրեն

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 25. 07. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "ՆՈՐ ՖՈՒԴ " ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Սահակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **29 850 000 (քսանինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ Մ. ՀԱԿՈԲՅԱՆ	«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1 «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ Հ/Հ 220133330237000 ՀՎՀՀ 03316568 տնօրեն Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
ՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2016թ.	
						սեպտեմբեր	հոկտեմբեր
1	խավիար /Խավիար/	կգ	30000	799	23 970 000	15000	15000
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	կգ	12000	490	5 880 000	6000	6000
Ընդամենը		29 850 000 (քսանինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ					

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ			
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	խավիար /Խավիար/	15241210/1/4/3	11 985 000	23 970 000	23 970 000	23 970 000
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	15331490/1/4/3	2 940 000	5 880 000	5 880 000	5 880 000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ածողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ
Հ/Հ 220133330237000
ՀՎՀՀ 03316568

տնօրեն

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30. 01. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "ՆՈՐ ՖՈՒԴ " ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Սահակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **73 361 487 (յոթանասուներեք միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ [illegible] ՀՀ պաշտպանության նախարարության ՆՅՏ-դեպարտամենտի պետի ՊԺԿ [illegible] Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1 «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ Հ/Հ 220133330237000 ՀՎՀՀ 03316568 տնօրեն ԱՄՆ. ԱԱ0435909 Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2017թ.								
						մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
1	խավիար /Խավիար/	կգ	53939	799	43097261		7000	7000	7000	7000	7000	7000	7000	4939
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	կգ	21041	490	10310090			10500	3500	3500	3541			
3	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	կգ	31573	333	10513809							15000	16573	
4	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	կգ	31573	299	9440327							15000	16573	
Ընդամենը		73 361 487 (յոթանասուներեք միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ												

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-2 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	խավիար /Խավիար/	15241210/1/4/3		5593000	11186000	16779000	22372000	27965000	33558000	39151000	43097261	43097261
2	մարինացված վարունգ /Մարինադ 1լ-ոց/	15331490/1/4/3			5145000	6860000	8575000	10310090	10310090	10310090	10310090	10310090
3	մարինացված վարունգ /Մարինադ 3լ-ոց/	15331490/2/4/3							4995000	10513809	10513809	10513809
4	պահածոյացված պոմիդոր /Մարինադ 3լ-ոց/	15331173/2/4/3							4485000	9440327	9440327	9440327

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
/Հ 900011144079
ՀՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան խճ. 132/1
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Սպիտակի մ/ճ
Հ/Հ 220133330237000
ՀՎՀՀ 03316568

տնօրեն

ԱՀՁ. AN 0435909

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ